

# ԵՂԵՂԱՆ ՓՈՂ

9-10 (119-120) նոյեմբեր-դեկտեմբեր, 2016



**Քրիստոնյա է, թե՞  
Հեքանոս ա**

*Այսպես ծնվեց մեկը նրանցից. Օճվեց նա՝*

*Այր մի Մաշտոց անունով:  
Այս չճնվեց, որ ավելացնի  
Հարց տվողների բանակն  
անպակաս:*

*Ես աշխարհ եկավ  
պատասխանելու:  
Եվ պատասխանը գտավ  
խկապես...*

**Պ. Սևակ**  
*«Եվ Այր մի Մաշտոց անուն...»*

Եվ այսպես ավելի քան 1600 տարի առաջ մեր մեծագույն հայերից մեկը՝ սուրբ Մեսրոպ Մաշտոցը, երկնեց մեր այրուբենը՝ հայոց այրուբենը: Ու քանի որ ես էլ, որ պիտի արժևորեմ այրուբենի դերն ու նշանակությունը մեր հայոց կյանքում, ես էլ, որ պիտի խոսեմ նրա գործունեության և բազում-բազում արժանիքներից, քանի որ արդեն 16 հարյուրամյակ զրվում ու խոսվում է այդ մասին, բայց, այնուհանդերձ, մեր մաշտոցյան այրուբենի գաղտնիքներից ու խորհուրդներից մեկի մասին այսօր և հարկ եմ համարում, և պարտադրված եմ բարձրաձայնել:

Մինչև հիմնական անելիքիս անդրադառնալը նորից ու նորից փաստեմք հետևյալը.  
Մաշտոցյան այրուբենը քրիստոնեական ուղղություն ունի, թույլ տրվի ասել՝ քրիստոնեամետ է, ինչը՝...

Սկսվում է Ա տառով, ինչպես բոլոր քրիստոնյա ազգերի այրուբենները, Ա, որը մեր հայերենում Արևն է, Արարիչը, Աստվածը կամ պարզապես Ար-ը, որը նույն Արեգակն է կամ մեր հայության խորհրդանշել էրկու Ար-ը՝ մեր Մասիս-Արարատը:

Այսպիսով, մաշտոցյան այրուբենն սկսվում է Ա տառով և փակվում է Բ-ով: Իսկ Բ-ն մեր տղեր Հիսուս Քրիստոսն է: Մաշտոցը նպատակային կերպով մեր այրուբենը փակել է Բ տառով՝

Քրիստոսով, որպեսզի հաստատի ժողովրդի ամենասիրած խոսքը՝ «Քրիստոսը բեզ պահապան», որպեսզի Հարց չկարողանա սարդել այնտեղ ու, Աստված մի արասցե, հանկարծ խաթարել տեսերի հերթագայությունը, աստանայական անկարգություն ստեղծել:

Տառերի հերթագայությունից խոսելով՝ ահա մոտեցա իմ հիմնական անելիքին, մեր այրուբենի 7-րդ տառին: Յոթ թիվը պատահական չի ընտրված.

«Յոթերորդ երկինք», «Յոթ հրաշալիք», «Յոթը որդով սեղան նստես»... Այստեղից էլ նաև ծիածանի յոթ գույն, երաժշտության յոթ նոտա:

Յոթը կեցության և հավերժության խորհրդանշն է:

Եվ ահա խիստ միտումնավոր մեր իմաստուն այր սուրբ Մեսրոպը իր պանծալի հրաշքի՝ այրուբենի 7-րդ տառի անունը դրել է և (Լուսրյուն, Լակ, Լակակ և այլն): Առաջին քրիստոնյաները հեթանոս քրմերի հայածանցներից հնարավորինս խուսափելու համար, Հիսուս Քրիստոսի անունը տալու փոխարեն, ծեղրելը բարձրացնում էին երկինք ու պարզապես ասում՝ Լ... Եվ այսպես դարձել շարունակ հայ մարդը սովորյալի ուժով այսօր էլ... անելիս հայացքը հառում է երկինք, է... այսինքն՝ Աստված, Արարիչ, երկնքի տիրակալ, մեր տեր Հիսուս Քրիստոս...  
Այսպիսով, նորից հիմնավոր

րենք, որ Լ-ն ամենակարող աստվածային տառն է՝ 7-րդը մեր այրուբենում:

Բայց, այնուամենայնիվ, ինչո՞ր՞նչ անպայման է Ո՞րն է նրա խորհուրդը մեր խոսքում:

Պարզվում է, որ հայ մարդը, ըստ Մաշտոցի իր արարքներում ոչ միայն պիտի ապավինի Աստծուն, այլև իր խոսքն ու գործը դարձնի աստվածահամո:

Վկայենք քերականությանը. հայերենում բայական գործողությունը սահմանական եղանակում կազմվում է մեծավ մասամբ դերբայով և օժանդակ բայով. օրինակ՝ գնում է, տեսնում է, սիրում է, ապրում է և այլն:

Եվ այս գնալը, տեսնելը, սիրելը, ապրելը հենց Աստծո օրհնությունն են ստանում և Աստվածահամո են դառնում մեր 7-րդ Աստվածավկա տառի՝ է տառի շնորհիվ:

Այլ օրինակ՝ սա մարդ է, սա կյանք է, սա հայ է... դարձյալ՝ է:

Իսկ ի՞նչ է արվում այսօր մեզանում. քրիստոնեական է-ն փոխարինվում է ա-ով: Եվ արդյունքում հայն այսօր սիրում աս, տեսնում աս, ապրում աս և գնում աս... հեթանոսաբար: Բայց ո՞րն են գնում, հայ, գուցե հեթանոսությո՞ւնը...

Հեթանոսությունը էլ մերն է, բան չունեմ ասելու, բայց դա մեր անցյալն է, մեր Արա (նույն Արև) Աստվածն է: Բայց մերք ո՞րն են գնում, դեպի ե՞տ, դեպի անցյալ, թե՞ ...

Մեկ փաստ ևս քերականության միջ:

Այս անցյալի կանչն այնքան է ուժգնացել, որ Ե խոնարհման խոսել, ընել, վազել, պարել և այլն դերբայները պատճառակա (ացն, եցն, ցն) անանցներով կիրառելիս այսօրվա հեթանոս հայերենում ոչ թե խոսեցնում են, այլ խոսացնում, ոչ թե քնեցնում են, այլ անպայման քնացնում, վազեցնելու փոխարեն վազացնում են, իսկ պարեցնելու տեղակ էլ՝ պարացնում:

Արդյունքում՝ դարերի խորքից վկայած հորինացու «Ողբ»... «Ողբամ զբեզ Հայոց աշխարհ, զի բարձես թագավորդ ու բահանող, խորհրդակամդ ու ուսուցանողդ...»:

Ու թե մի հրաշքով հորինացու մեր օրերում հայտնվեղ, մի նոր «Ողբ» պիտի գրեղ, քանի որ այսօր էլ մեր պատասխանատու այրերը հեռուտառեքերից շարունակում են ոչ թե «լացեցնել», այլ անպայման «լացացնել»...

Քիչ է ասել «լացացնում» են, հետո էլ իրենց դուրսիկի տակում ասես «պարացնում» են, այդ բովում նաև հայոց լեզվի պետական տեսչությանը:

Ե՞րբ ենք խելի գալու... է՛...  
**ԼԵՎՈՆ ԲԱՂՎԱՍՏՅԱՆ**

## ԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Պատմության դարպասները ծնծող 2016-ը բարեբեր էր Հի-րանկ աշխարհի գրականության համար: Արդեն աշնանամուտ է, ու երբ տարվա գրական հունձը դասարարում ենք ժամանակի դարակներին, վերջիններս ճոճուս են անմահադեպ բերքի առատությունից:  
«Գրական Գյուճիկ» ծղկկա-բաղում ներառված են Հիբակուն մարդը և ստեղծագործող 57 գրողներ՝ տարածքի գրողների գրեթե ողջ գունապնակը:  
Պեսակյան աջակցությամբ տպագրվել են իննգ հեղինակների ստեղծագործություններ՝ Սու-քիաս Արայայանի «Չախտեն», Շնորհիկ Շախինյանի «ԱՄԻՆ ու քամին», Հակոբ Մուշեղի «Հին բազավորական նետեր», Գևորգ Յունանյանի «Գևորգիներ», Սոֆյա Մանուկյանի «Գարունն անց մեկին»:

Ուսման Ավագյանի «Հոգև կանչ», Մնացական Մուրադյանի «Այն ամենը, ինչ որ պետք է» ժողովածուները:

Մի մշակակալից երևույթ. ՀԳՄ Հիբակուն մարդային բաժանմունքը տպագրեց իր երախտավոր գավալի՝ Սարո Գյուճիկեցու «Գյուճիկ, քո կենսաց» ժողովածուն՝ մի փոքրիկ հատուցում հայրենասեր ու գյուճիկասեր հեղինակին:

Սպասում ենք նաև մեր գրական կազմակերպության սահմանած «Օջող Օջողյան» մրցանակարաշխության հարթող Ամայա Կարայանի «Կեցության կայծեր» բանաստեղծությունների ժողովածուի տպագրմանը:  
Միակամակ «եղեգան փող»-ի 2016թ. նախակերջին համարը (սահմանված պարբերականությունը պահում ենք չնայած դժվարությունների):  
Գործում է գրական ստուդիան Գյուճուկ գեղագիտության ազգային կենտրոնում, որտեղ բանաստեղծուհի Ռոզա Հովհաննիսյանը իր շուրջն է հավաքել մոտ քսան շնորհալի ստեղծագործողների, որոնցից մի քանիսը արդեն հանրապետական մրցանակարաշխությունների հաղթողներ են:

Երկրի Աճյալության 25-ամյակի առիթով ՀՀ նախագահի կողմից «Երախտագիտության

մեղալ»-ով է պարգևատրվել բանաստեղծ Վահան Սևակը: ՀԳՄ և ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «Պոեզիա» անվանակարգում 3-րդ մրցանակի է արժանացել Սամվել Մարգարյանը, իսկ բանաստեղծուհի Հրամուշը նույն անվանակարգում՝ խրախուսական մրցանակի:

Գուցե հերիք է, թե՛... Ամեն դեպքում ի՞նչ հատկացված տարածքը սպառվեց...  
**ՀԱՎՈՐ ՄՈՒՇ**

### ԱՆՂՂՄԱԿ ԿԱՐՊԵՏՅԱՆ

ՀԳՄ Հիբակուն մարդային բաժանմունքի նախագահ

Այս տարվա ավարտն է: Ավային ինձ համար տարին չի կանգնել իր ուզած տեղում: Կարևոր տեղաշարժում ու անկնկալներ եղան իմ գրական կյանքում: Ժամանակի շնչով կանցած ինքնատիպ հեքիաթները ընթերցողներից ներկայացվելու հանրապետական մամուլում, «Գրական Գյուճիկ» ամսանախում, «Համ-շեն» հանդեսում: ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ իրատարակվեց «Հին բազավորական նետեր» հեքիաթների ժողովածու:

Ի՞նչ համար ուրախալին այն է, որ իմ ստեղծագործություններով չեմ դավանանում գրականության շախին, արվեստի օրենքներին, աշխարհի բարոյական կարգին ու հոգևոր ազատությանը: Ստեղծագործություններս, որ շեղմ ընդունելության են արժանացել

ընթերցողների և գրական շրջանակների կողմից, իրենք բազմաշերտությամբ, արտասովոր սյուժետային լուծումներով արտացոլում են իրականությունը:

Գրողը աշխարհի բաց նյարդն է, ուրեմն զգայուն է և արձանագրում է կյանքի երևույթներին: Ինչպես հայելու մեջ արտացոլանքը, այնպես էլ արյան մեջ են արտացոլվում երևույթները: Երևույթները հատուկացնում են մարդուն և ամեն տարեկերը նա հաշվետու է իր ապրած օրերի համար:

Գրողի համար ամենաերջանիկ պահը նոր գրքի լույսընծայումն է: Ի՞նչ «Սիրո կանթեղ» բանաստեղծական ժողովածուն դրա առիավայրն է:

Մինչ տարեկերը ընթերցողի սեղանին կորվի «Կեցության կայ-մեր» նոր ժողովածու: Կեցության կայմեր, քանի որ կեցության հիմքը պահում են երեք կայմերը՝ սերը, հույսը և հավատը:

### ՍԱՍՆԵՎ ԿԱՐՅԱՆ





# Տարօրինակ է սերը, բարեկամ...

Համո Ասիայանը կնոջ՝ Մարիա Հակոբյանի հետ



Երկրային կյանքում սիրո մեջ երջանիկ կարող էր համարվել Համո Ասիայան և Մարիա Հակոբյան զույգը, որին Աստված մեծ շնորհ էր արել. բացի բանաստեղծական ժիրքից նաև համբուրել էր ճակատներն ու սիրո անբացատրելի լույս տվել: Նրանց միությունը, դատելով անհատական հատկանիշներից, մարդկային որակից ու խառնվածքից, երբեք չէր խաբարվելու: Ցավոք, երկրային կյանքում այն տեղը ընդամենը 34 տարի, սակայն շարունակվում է ապրել հավերժության մեջ: Դրա վկայությունն է նրանց ստեղծած գրականությունը, որը պերճախոս երկխոսություն է երկնքից: Ինչպես վկայում է նրանց որդին՝ Նաիրի Ասիայանը, այս երկու անհատականությունները բավականին ցնամ էին իրար. երկուսն էլ տաղանդավոր, ուժեղ, ցանկալի, հզոր, իսկ հայտնի ճշմարտություն է, որ նմանները դժվար են լեզու գտնում: Բացի այդ, շրջապատի գորշ մթնոլորտը, բանաբարություններն ու չկամությունը, ինչ-որ տեղ նաև նենգավոր թյուրիմացությունը, իրենց բացասական ազդեցությունն ուժեղացնում էր նրանց ճակատագրերում: Այս երկու բանաստեղծների իրական աշխարհի ըմբռնումն ու հոգևոր-մշակութային յուրացումը սնունդ էին առնում միևնույն միջավայրից, որի արդյունքում զարմանալի է, որ նրանց գեղատալան ընկալումներն ու պատկերացումները բազմաթիվ հարցերում համընկան: Չնայած ստեղծագործությունների առաջին հայացքից թվացող հետաքրքրաշարժ նմանությանը՝ բառապաշարի, հանգի, անկեղծության, մի շարք գեղարվեստական արժանիքների, նրանց նաև տարբեր են՝ հատկապես բնարժան հերոսի, կյանքի ու մահվան, լինելու ու կայանալու որոնման մեջ: Մարիա Հակոբյանը Համո Ասիայանի բացած հունով չի քայլում, քանզի ինքը վարդաբաց է թեև համայն, սակայն ինքնուրույն արահետ: Նրա զուտ կամացի, բնորոշ պոեզիան հնչում է շատ տեսերիմ: Այն վստահելի, հարուստ մեկին շշուկով սրտինը հայտնելու անկեղծությունն ունի, որից ընթերցողին փոխադարձ համակրանք ու սրտացավություն է փոխանցվում: Հակոբյանի պոեզիան իր երազվուն հոգու ճիշտ պատճենն է, և այնքան է նուրբ, որ իր խոսքերով ասած, «մանուշակազույն» բարակ մուտրից բաշխված է պետք, որ կուպետ մատնանկերը չդրոշմվեն վրան, ու վերադարձան շողից, արցունքի գոլից, շուրթերի դողից չխտ-

նավանան ու չխախտեն տողերի տակ թաքցված առիթները միամտությամբ: Երկնային լույս սերը երկուսի հոգում էլ ծնվում է անմկատ, այնպես, ինչպես բնության մեջ ներդաշնակորեն աճող ու ծաղկող ամեն ինչ, այն վեր է գիտակցությունից ու բար կանոններից: «Խառնվեցին երկու ես /Ու դարձան մեկ՝ ես ու դու» կամ «Եղել է արդեն երանելին, /Այս ի՞նչ հրաշքով իրար գտանք, /Բախտից չեմ ուզում ես ավելին, /Միայն գտածը ձեռքից չտանք», գրում է Մարիանը, իսկ Մարիա Հակոբյանը կարծես շարունակում՝ «Ոչ որոնել եմ ու ոչ երազել, /Դու երկնքից ես ի՞նչ բաժին հասնել»: Եթե Մ. Հակոբյանի պոեզիան ամբողջովին սիրո տարաբնույթ երգ է հիշեցնում, ապա Մարիայի ստեղծագործությունները դիտարկելիս թվում է՝ սիրո երգն աննշար է: Սակայն այն ամենուր է. բնության ու մարդու, հայրենիքի, կյանքի ու մահվան, խոհափիլիսոփայական երգերում, որոնց համար սիրո բերկրանքն ու ավելի շատ տառապանք-ցավը նոր իմաստ են հաղորդել ասելիքին: «Իմ սիրուր տողերն արդյոք չե՞ն հերթում /Որ քո անունը չեմ հիշել երգում»: / Հ. Ա. / Խիստ զգացմունքային ու միա-միտ է կամացի եռությունը, որքան էլ որ վշտանա, կասկածի ու չարանա, մի թեթև ակնարկից, մի կիսաքննող հանդիմանացից անզատ նորից շարունակում է հավատալ, իսկ զղջման ու սիրո խոստովանության դրսևորումները չեն ուշանում: «Էլ չեմ ամի, / Էլ չեմ ամի / Քեզ ի՞նչ անցի չեմ վաճառ, / Էլ չեմ գնա, որ չգնաս, / Չեմ հեռանա՝ չհեռանա, / Կհավատամ, որ հավատաս»: / Գ. / Այստեղ արդեն սիրո, ինքնանվիրումի գազաթանկետն է, զվաթապուտու առաջացող հուզում այն աստիճանի, որ կնոջ սերը գերազանցում է ինքն իրեն, անզամ, / մեղաբեզ, Աստված / բարի կամենում իրենից հեռացող սիրեցյալին. «Ու թե գնաս, ու թե գնաս, / Ես մայրդի թող կամայի»: / Գ. / Կյանքի հավերժական հոլովությունը մեջ սիրո մի ակնթարթն ու մի տեսակը չէ, որ հարազատ է բանաստեղծի հոգում: Նա ասարում է պատանեկան սիրո անդրոշ զգացումից մինչև հասուն սիրո վայելք, ոգևորությունն ու հիասթափություն, սիրո պատճառած թուլանքն ու ցավազին տանջանք: Սակայն բոլոր դեպքերում էլ մտնում է իրեն հավատարմի՝ ընդունելով սերը որպես երկնային պարզակ՝ բնության նման անքննելի ու տարրուրելի, որի արմատը սնվում է ինքնանվիրումից: Անզամ մերժումն ու ուրացությունը սիրո

կրակը մարել չեն կարող: Սա է առեղծվածների առեղծվածը, և Համո Ասիայան-Մարիա Հակոբյան սիրային դաշինքի հավերժության անմեկնելի հրաշքի հնաքը: «Դու ուզեցիր, որ ես թեզ տիրություն անեմ / Ու ես անտեր մնամ / Ամեն- ամեն ինչ տամ, տեղը ոչինչ չառնեմ / Ու թեզ ընկեր մնամ»: / Հ. Ա. / Բանաստեղծին թվում է՝ սիրածին կողքին պահելու համար իրաշարժ պիտի լինել: «...Ես կարող էի / Մեկերջամայի իմ կորուստներով / Գնել Հարդազող ու տալ թեզ նկեր / Դու Հարդազողի կարիք չուներիր, / Քեզ լույս մի խավտ ուղեգրող էր պետք՝ / Կրանք քանդակված / Իմ ոտնահետքը տեսնելու համար: Իսկ ի՞նչ է երազում կինը, դժվար չէ հասկանալ: Եթե սրտում իսկական սեր է գտնված երազ, ափսոսում է, որ «Ամբողջ կյանքում մեկը չեղավ, / Դոգնած ուսուլու հենվելի», որ չտազանապետ սիրտը սիրուց, ձեռքերին իջնող մի օգնող ձեռք, և երգերի ողջ չմարտ: Այսինքն, ընդամենը հասկանալ ու գնահատել է պետք: Համայն առօրյա կյանքի հոգսերի ետևից ընկած չենք էլ նկատում, թե որքան ենք կարծադան ու անտարբեր դառնում, անզամ ամենամիտ և կամացի համրեպ, որին կորցնելուց հետո կյանքը իմաստազրկվում է: «Բախտը մեզ համար հեռավոր մի գանձ, / Համայն թռչում է թվում ոսկեթև, / Եվ դու մտքերիդ ետևից ընկած / Մտորում ես նրան յոթ սարի ետև»: / Հ. Ա. /

Երբեմն սիրող զույգերի միջև անհարթահարթի արագացման են լինում, որոնք սովորական աչքով հնարավոր չէ տեսնել, հոգու տեսողություն է պետք: «Իմ և քո միջև / Բարակ մի պատ / Փոքրիկ մի դուր էր հայելապատված, / Որը միշտ մակ էր»: / Գ. / Եվ այդ հայելու մեջ յուրաքանչյուրն իր սեփական արտացոլանքն էր տեսնում, ինքն իրեն խղճում ու խնայում, որից էլ ծնվում էր երգերի խռով-վեճ, վեճն ու երազ-տեսնելի կործանման ցավը, մինչդեռ՝ «Ինձ ասում էիր՝ / Ո՞րն էր դու տխրեց, / Կհիվանդանամ... / Ես ուրախ, անհոգ / Թռչկում էի իր: Ավելի լին՝ «Եթե հիվանդանաս, կմահանամ, / Եթե մահանա՝ կբարանամ, / Դավադուր էի...» / Գ. / Հավատի կորուստն ամենամեծ ցավն է, և բանաստեղծը փորձում է անել անկարելի. «Կգամ, զուլխա քարերին տալով / Որ իմ հավատով հավատը փրկեմ / Եվ նորից գոկեմ թեզ հավատալով»: Անկեղծությունից բացի ամեն ինչ ավելորդ է սիրո մեջ: Արդեն ավելեծ ծովում տարուբերվում են սիրող սրտե-

րը, տատանվում, և փոխադարձ վստահությունը անհանում է: «Մեր արանքով մթին հեղեղներ են անցել ու գնացել: / Երկու հանդիպակաց քարափներ են դարձել ու մնացել: / Ավա՛ղ, ոչ երբևէ հանդիպել ենք կարող, ոչ հեռանալ: / Հ. Ա. / Գուցե ամեն ինչ դեռ կորած չէ, և կարելի է վերականգնել խարխված հարաբերությունները, չէ՞ որ մեջտեղում դեռ սեր կա: «Ինձ ասելու ոչինչ չունեմ, / Գուցե էլ չենք հանդիպելու... / ... Դու հիշելու ոչինչ չունեմ, / Ոչինչ չունեմ ս հարցնելու... / ... Դու զղջալու ոչինչ չունեմ...» / Գ. / Մակայն այլևս պատանեկան վախճողած կամ երիտասարդական կրակ սերը չէ, որը կարող է թեթև քամի խանդից նորից բոցավառվել: Այս դեպքում վիրավորանք այնքան է խոր, որ սկսվում է մի անբացատրելի ու տատակոտ ուղի՝ չհեռանալով-կորցնելու, սուկ հուշերում ու երգանքներում իրար վերագտնելու, և որ ամենացավալի են, օտարանալու կսկիծով: «Հազար քարեր փշրելով ճանապարհին մեր հեռու / Փշրվեցինք քարերին և փշրեցինք իրարու: / Ծովին հասանք և գտանք, ինչ որ ափսոս էր մեզ տալու, / Բայց չիմացանք, որ արդեն կորցրել ենք իրարու: / Հ. Ա. / Այս ամենից հետո սիրահարը կանգնում է ճշմարտության առջև միայնակ՝ ինքն է ու ինքը, ու, երբ կույր աչքերը բացվում են ու ազատվում է սիրո թորեցնող թույնի ազդեցությունից, նկատում է իր եսի կորուստը և արասպիում է անորոշության ցավից: «Դու կտորեցիր իմ մեջ / Իմ վեհությունը, / Աշխարհին ճաշելու / Իմ պարզությունը»: / Գ. / Արդյունքում փշրված կամք է ու հավատի կորուստ: Բնականաբար, սրան պիտի հետևեր ամենացավալի. «Դու կտորեցիր իմ մեջ / Քեզ համար ապրելու / Իմ ցանկությունը...»: / Գ. /


Կատարվածն այնքան է շեշտակի, որ անզամ հարվածի պահին սուր ցավ չի պատճառում, սակայն զգացնել է տալիս իր մասին, երբ դարձել է փաստ՝ ստույգություն, օտարացում, որին պիտի հետևի անդուհունի հասած ինքնակործան՝ մեկի ուսին հենվելու, նեցուկ փնտրելու մեղապարտ քայլը: «Մեկը լինի, / Նրան սիրով իմ զարդարեմ, / Որ սիրելուց, տառապելուց, / Երգերից չդադարեմ»: / Գ. /

Ապրված սերն այնքան նվազ չէ, որ խանդի հոլից հանգի անհետ, և ծնվում են ներման, զղջման երգեր, որոնք գալիս են հավաստելու, որ մեքեր երկուստեք է: Սակայն սա էլ չի սփոփում, քանզի վերածվում է մի կեղծ զգացմունքի, որը սիրո անաղարտ առաքելության

*Սեր սիրո տունը արևին մոտ էր,  
Արևահար էր ու արևոտ էր,  
Երազից հյուսված երգ ու վրան էր,  
Իմն ու նրանն էր...  
/ Գ. /*

*ԵՊՄԳ դոցենտ, սափաճազետ՝  
Նաիրա Խաչատրյան*





ՀԱՌՈՒԹՅՈՒՆ  
ՀՈՎԿԱՆՆԻՍՅԱՆ

Ծնվել է 1948թ. հոկտեմբերի 8-ին, Լեհիստանում (Գյումրի)։ Ավարտել է Լեհիստանի պոլիտեխնիկական ինստիտուտը և ստացել ինժեներ-շինարարի որակավորում։ Հ. Հովհաննիսյանի բանաստեղծությունները տպագրվել են հանրապետական մամուլում, «Գրական Շիրակ», «Գրական Գյումրի» պամսանիներում, «Գարուն» ամսագրում, «Ավանգարդ» թերթում և այլն։

ՄՈՒՍԿԱԿԱԾ ԳԼԱՍՔ

Լքված կայարան են դարձել... Բերող ճանապարհը մահացել է հաստանքեք փոշուց, Տանողը արձագանքում է քո հեռացումը, Իսկ ես կայարան են, մոռացված կայարան...

Կյանքիս գնացրը մոլորվել է ծանր ճամփաբաժանում, Հեռավոր լույսերի կանչող մշուշները գունաթափ Ասես հոգնել են ինձ հսկելուց։

Իմ գնացրը չի շարժվում, հավվում է, Հավվում է ոչ սառցի նման ջերմությունից, Ես տար է դեռ, հավվում է սառնությունից։

Այո՛, անշուշտ կա ցրտի մի աստիճան, Որին հաջորդում է հալոցքը... Եվ ես հավվում եմ...

Եվ էլ կայարան չի լինի, Եկող ու գնացող էլ չի լինի, Հաջորդ կայարանը նախորդին նման չի լինի,

Ոչինչ, մի տխրի, հասի՛ր մեկ ուրիշին, Իսկ ես կամաց-կամաց կշոգիսնամ։

Իմ վերջին կաթիլը կզուրկոչիս քո արձագանքի Անլսելի դարձած տատանման հետ,

Իմ ճամփաներին կարմիր լույս կվառվի, Իսկ քո ճամփին՝ կանաչ, Կայարան մտնելիս՝ կանաչ, Դուրս գալիս՝ կանաչ,

Կայարանից կայարան՝ կանաչ... Իմ գնացրը այնժամ... կըրորանա՞...

ԽՐԱՏ ԱՈՒՎՈՏԻ

Ինձ աղբյուրներն ասին. - արտի միջով գնա, Որտեղից մաս-մաս կայծակներին չտես, Թող քրտինքը թափած հողերի

մեջ մնա, Հետո երկինք կելնես ու նորից ետ գալու համար ուժը չներեց...

ԿԱՆՉ

Ես մեղավոր՝ Աստծո առաջ ել քո առաջ ես մեղավոր, Դարեր ապրող մեղքի համար, Վարքի համար արատավոր, Ծաղկեփունջ եմ դնում շիրմին. -Աստ հանգչում է ծովը վարար, Որ փարվել էր ավազներին Ու հավիտյան պիտի ծփար...

Ես մեղավոր՝ կյանքի առաջ, Կամքի առաջ ես մեղավոր, Խաչքարերի նախ ու հառաչ, Քամուց խարխուլ բույն սգավոր, Իմ մոմերը նորից վառել Ու աղոթքիս լույսի ներքո Ինձ իմ վշտի մեջ եմ առել, Արթնացնում եմ անուճը քո։

ՏՆՈՒՐ ԶԱՐԹՈՆՔ

Եվ հեռացան մշուշները խոնավ ու քաջ սարերից, Ու շնչեցին զազաքները արևացած նոր բույրեր, Ու խոտացան արցունքները ծերպերի մեջ ժայռերի, Գլուխները խելակորույս չզգալով վիշտ ու ցավեր։

Ամենացան մշուշները, սարերը խուճկ ծխացին, Հոգի առած գետակները նոր լույն առան լեռնածին, Փշուկեցին ամպերը գոռ, մութը ցրվեց ճգնավոր, Զորի խորքում թև կտորած մի արտույտ կար վիրավոր։

\*\*\*

Ծառից իր վերջին տերևն ուզեցի, Հետո տուն տարա մի հատիկ աշուն, Տերևը երգիս թևին կարեցի, Ո՛ր գնաց երգս՝ արդեն չեմ հիշում։

Տխուր էր, գիտեմ, սիրտս աշնան պես Մշուշ էր իջել երգիս տողերին, Մեր ոսկեղեղին երազները մեզ Լետելու էին ձնոտ խաղերին։

Զմեռը եկավ, ձմեռը գնաց, Գարունն էլ եկավ երգս չբերեց,

Մի արտույտ կար թևը կտորած չար կարկտի հարվածից, Ասես ծորն էլ էր մոռացված արեգակի շողերից, Ու մի ցուրտ կար խորունկ արտուն մի դող կար ափսոսի, Որ արտույտի երգը անուշ գետակ էլ չի լսի։

ԻՆՉՊԵՄ ՍՈՈՒՆԱՍ

Ուրիշ հավթեր են քո հյուրը դարձել, Գրկիդ մեջ ուրիշ երազ է ծաղկել, Ուրիշ գառներ են լանջերիդ գածվել, Բայց նորից դու նույն ծորն ես մնացել։

Ես էլ եմ ուրիշ, նախկինը չեմ էլ, Երեկ քիչ խելառ, այսօր դառնացած Իմ արահետով քեզ մոտ եմ եկել՝ Հուշերս հանձնեմ քարիդ կանաչած։

Ու նստեմ փափուկ մածոն զորգերին, Ու մի նոր մոդեստ հսկի ինձ զգուշ, Աչքերս՝ ընծա գետիկ ջրերին, Որոնց խշշոցը հիմ է ու թմբուլ։

Ու շաղկեմ շնչիդ, զովիդ միանամ, Պահվեմ թևերում քիթեղնիկների, Սեռվտու լուս շաղկիդ դառնամ, Յողվեմ նեկտարով քո ծաղիկներին։

Հետո հեռանամ այքս դեպի քեզ, Դեմքս դեպի քեզ թողնեմ հեռանամ, Իմ սիրած վայրը վերստին դու ես, Ել ինչպե՛ս, ինչպե՛ս ես քեզ մոռանամ։



ՍԱՐԻՆԱ  
ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Գրում եմ, երբ բառը սկսում է խոսել իմ մեջ, ներշնչման պահին ինձ են երրորդ աչքով չափվող բոլոր երկինքները... Հավատում եմ, որ ինձ կներվեն գրված ու չգրված բառերս, քանզի այն են, ինչ կան»։ Այս տարվա նոյեմբերին Սարինան, մասնակցելով «Նուռ-2» համահայկական գրական 2-րդ մրցանակաբաշխությանը, արժանացել է առաջին մրցանակի՝ «Պոեզիա» անվանակարգում։

Եվ քիվերից իջնող, քոթի համն առած կանաչ բորբոսներ... Երբ կուպերը իրար գրկեն, Մորփեոսը կնայի զիտակցության աչքից, ճանկեղծվող դոմերը ներս կվազի մոխրակն մի կատու,

Ո՞ր մոռոցով վատնած իր կյանքերից Կթաշի վերձակա, Եվ ակամքների մեջ զարթնած ցավի նման Կնվված, կտանջեն, Փշաքողված, չորեքթաք կվազեն ժամերի արանքով Այն որբերը բոլոր, որ չասվեցին-

Մինչև արևածագ, մինչև զալ գիշերներն անհասցե Անցյալի պատմ այս կողմ, Բարձի տակ մնացած արև-արև՝ Լուսաբացներ-

ու նույն կատուն... կուշ կգա անլույսում կիսափակ մի աչքի, Ու նրա հետ այն որբերը բոլոր կվալեն...

ԱՆՊԱՏԱՍԻԱՆ

Եվ հարցականի կեռերից կախված Օղակ-պարաններ՝ դես ու դեն ճոճվող, Եվ նրանց միջով վարզող քամիներ, Որ պտույտներում վերովվարումի հասնում են ներսում հազար ու մի ցավ,

Ու զոյն իմ տալիս արարումների Կավ-պատերով մեկ ու նետում վերև Ծամածոելով՝ լաբիրինթներում հայելիների...

Եվ խոճի անտակ վիհի երկայնքով Քարկապած թել-թել մեղսազոլումը Ելել է որպես մի լարախաղաց Ինքնահաշտության փշալարերով բորկի անցնելու, Քավության խոնավ գերանը ու-

սին, որ չի վախենա բոցերից չարի, Ու սև ճակատին խաչ նկարելով դարձի կերի, Կցարդի դուռն այն՝ ճամփաբաժանի մեջտեղում դրած, Որից այն կողմ դեռ կարող է գտնել ժամանակների ուրիշ չափումներ այլ պայքարների,

Մինչև հողը իր ուժով կքաշի իր մեջ Կավե ճարմինն այդ Որդերի խնջույք-զոհասեղանին փերթ-փերթ դնելով, Եվ օդում թողած խանձահոտ մի գորշ միակ հարցումի-

է՛լի, է՛լի, լա՛մա. Սաքաքսանի՛...

Պաշտի վրա Քրիստոսի խաչերը արածներն, «Ստոված իմ, Աստված իմ, ինչո՞ւ բողրի ինձ» (Սաք.27.46)

\*\*\*

Իմ չափչափած փողոցներով հեռուներից երբ գամ, Քաղեմ փշի ծաղիկ ու մի փունջ երկրուկ, Կեներեմ հայացքս մայրքարի քանդակում, Ու կմնամ այդպես օդից կախված մի հյուր...

Բարակ ոտքերն արդեն խաչամի մեջ, Ինձ կկանչեն բարդիները մեր դռան, Եվ խորք կնայի Արագածն հոնքի տակից, Ես կհանեմ ծակ գրպաններից ձեռքերս սառած

Ու հայացքի տարողության պնտակով մեկ Շաղ կտամ կարոտները կտուրից մեր տան... Կմնամ անարձագանք ինչ-որ սին թրթիռներ- ես կինձանամ, որ վարում ինձ էլ դժվար թե սիրեն,

ու կարոտեն նույնիսկ կիսատ մի ամպի չափ, Ես միշտ կես-կես... մեմակ, բախտի քամուց քշված խաչամի պես կզորվեմ տերև-տերև անհայտության ուրիշ փողոցներով,

Մի խոնավ սիրտ-կարոտ գրկած, փշի ծաղիկ և երկուցուկ, տերևաթափ բարդու ճյուղավոր հավատն իրար տալով Անդրծովյան մամոտս պատերի տակ թողնեմ հեռացումի փշուրները մաշված

Եվ Ամեն-ը, շշուկ-շշուկ աղոթքները պոկված, մնա օդում մեմակ, մեմակ...մեմակ-թե գամ...

Նստիմ Յոթվերքի սև պատերի տակ Ու Տայեմ ճերմակ արունիկներին, Ծո, չտանիս մորթես, քաջ թող՝ թոնին նստիմ էն խաչի մոտ...

Մտնիմ զույգ մոմ վառած, Ըսեմ՝ ուր ես, Ես իմանը ջու ստեղծածն է, էն հավքն էլ, Վերից հանգիստ կաշե՛ս՝ ինչը հեշտ կմոթեմ։ Ու խոշոված մնամ պատախամիդ պատաղ- Երբ որ ելնիմ նորապսակ զույգեր հաչկարած դռներից,

Ու քոցնեմ, ու բախտավոր երբան, Ես քեզի հասկընամ, Մտնիմ զույգ մոմ վառած ու հետո հաշտվիմ, խաղաղ սրտով երբան նստիմ էն խնկարույր պատերի տակ ու Տայեմ ճերմակ արունիկներին։

Օրը կուլ է տվել լեզուն, Իր ժամանակը կորցրած մոխրագույն մի երկինք թափառում է հիմա քաղաքի վերևում և տուն չունի...

Ինչ-որ տեղ՝ իմ մեջ, զարնան որոտ ու շանք, ծաղկաթափ են լինում ճերմակ բալենիներ, արևի աչքեր են տեսնում երազներիս երազները ամեն լուսաբացին,

և լույսի բարության դիմաց քանոն բերան ընկած բալի ծաղիկներ են իմ բառերը, Ես նրանցով ափսափ լի, սիսա ծվարում եմ զոգին օրվա քաջ պատուհանների ու բարունակվում եմ...

ու շարունակվում եմ հանդգնությամբ համառ իմ հեքիաթի վերջը հորինել նույն կերպ միշտ - լինեմ-չլինեմ՝

Գողանամ խորքերից տիեզերքի ժպիտները ծիրկաթնահամ, տեսնեմ նախանձող հայացքը անլեզու օրերի,

ու քայլեմ վեր-իվարտ գնամ, մի սիրտ լիքը աղոթք տանեմ ... վերևներից ընծա...

Այս տողն այն կողմ խոնավ-լիտնավ էլ երեկ-նվալում են բառերն ու քննադատում են անուն ամեն գիշեր... Եվ վայրն է անփոփոխ, Բարձի տակ մնացած լուսաբացներ,





Ելիսա Գոլիաննիսյան

ՍԵՉ ԴԵՏ՝ ՆՈՒՅՆ ԵՐԿԼԵԻ ՏԱԿ

2016-ը հորեյանական է ամրակազիր, հրապարակախոս, արձակագիր, ԳԳՄ արձակի բաժնի վարիչ Ելիսա Գոլիաննիսյանի համար: Տոնական միջոցառումներ եղել են ու դեռ կլինեն: Միայն վերջերս ԳԳ միությունը մեծ շուրջով նշեց հորեյանական առիթը, իսկ ի հավելում այս ամենի՝ լույս տեսավ գրողի «Ամենակարգին մարդիկ եւ ազատները» ինքնատիպ խորագրով ժողովածուն:

Ալիսա Գոլիաննիսյանը հեղինակ է մի շարք գրքերի /«Թանաքագույն առավոտներ» /1988թ./, «Սիրո քննույն հեքիաթ» /1994թ./, «Դարը նավահանգիստ» /2002թ./, «Օղակը փակվում է» /2003թ./, «Կամայ, ուրախ ճամփորդներ» /2007թ., երեսնամ, «Կամայ, ուրախ ճամփորդներ» /2010թ., Դալիսա, «Ելուդեր, տերեւներ», «Պատիվներ մեր փուչ կարմիրը» /2009թ./, «Ելուդեր, տերեւներ» /2012թ./, նաեւ բազմաթիվ հրապարակախոսական, բանասիրական, կինոգիտական հոդվածների: Թարգմանվել է ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, ուկրաիներեն, ռումիներեն, պարսկերեն, վրացերեն: «Լենինական, Գյումրի, Կումայրի» վիպակը տպագրվել է ռուսերեն:

Մարթեղով Ալիսա Գոլիաննիսյանին երկար տարիների՝ մեր-դարակարգին հազցած անձնական եւ ստեղծագործական կյանք՝ միանում ենք հիշած եւ հնչելիք բոլոր շնորհավորանքներին:

ԳԳՄ Շիրակի մարզային բաժանմունք, «Եղեգան փող» թերթ

ՅԵՆՆ

Երբ խուճուճ, շեկ տղան իր երգով, «ռեպ» պարելով մտավ մեր փողոց, կարծեցինք՝ փահլան է գալու: Անձնաճոռ մեկը, որ աստիճանին բարձրացած՝ զագատար խողովակի վրա ինչ-որ բան էր ամրացնում, տղային ձայն տվեց. «Յեյո՛ւ, դու թո գործն արա»: «Փահլաննի լարն է ամրացնում», անցավ բոլոր մեծերիս մտքով: Բայց նա ինքն իր համար Յեյոյից անկախ շարունակում էր իր գործը: Իսկ Յեյուն ցածում երգում, կոկորդով երաժշտական տարբեր գործիքների ձայներ հանելով՝ պարում էր: Ենկ զանգուրները պարելիս կարծես քանի էին առաջացնում իրենցով: Փողոցի բոլոր երեխաները մի ռուպետն հավաքվեցին Յեյոյի շուրջը՝ առանց իմանալու, թե ով է նա ու թե ինչու է եկել: Երբ տարիներ առաջ փահլան էր գալիս, ավելի լայն էր բաժուն փողոցներ էր ընտրում: Այս անգամ մենք՝ մեծերով, մտածեցինք՝ ժամանակները փոխվել են, երևի փահլանը մի քան գիտի, որ ներ փողոց է ընտրել: Բայց այդ շեկ, խուճուճ Յեյոյի միծնցեցումը, ասող-խոսող վարմունքին դեռ ոչ մի փահլան էլ չէր հետևում, որ կողքի փողոցներում գործը վերացնելուց հետո, ըստ մեզ՝ մեծերիս, դեռ զուցե գալու էր: Սենք՝ մեծերովս, մի քիչ ուշ, քայք գլխի ընկանք, որ ոչ մի փահլան էլ չի գալու, որ Յեյուն ինքնագործ է, կամ՝ մեծագործ: Շուտով նրա երգերն ուղեկցվեցին տուրպակից համվող, իր իսկ շնչով փչվող փուչիկներով, որոնցով մի քանի ռուպետն էլ չցվեց ամբողջ փողոցը: Երեխաները ռուպետ մեկ տուն էին վազում՝ ծնողներից 100-դրամանոցներ խնդրելու: Ծնողներն իրենց էլ կարծես արդեն գլխի էին ընկել, որ փողոցում ոչ սովորական եռուզեռ է: «Բռնիք ե՛ս» խնդի բոլոր անդամների փոխարեն տարբեր ձայներով նրանց երգերը երգելու հետ Յեյոյի տուրպակից սկեռնին հրավառության պես դուրս բռնեց եզիպատագործին ծողիկներով փայլիտուն, գունավոր պարկիկները: Խանութում երեխաները դրանք սանձ օր 50 դրամով են գնում, իսկ Յեյոյից սիրով գնում էին 100-ով, որովհետև Յեյուն բոլոր երգերն անգիր գիտեր, Ե. քանի որ գերազանց էր նրա «ռեպը»: Շուտով երեխաների հետ տուրպակի շուրջը պար ընձեց: Երեխաները հնայված էին Յեյոյի խուճուճ մազերի ծածանումով, հիացած էին նրա գույնզգույն փուչիկներով, «Ռեպ»-ի շարժումներով հրամանավոր եզիպատագործ-

նի ծողիկներով: Մինչև հաջորդ երկու օրը երեխաներից ոչ մեկը թույլ չէր տվել, որ պայթի իր փուչիկը, ոչ մեկը չէր ասում «Յեյոյի վաճառած փուչիկները», ասում էին՝ «Յեյոյի տված փուչիկները»: Երանք, մենք՝ մեծերս նույնպես, համոզված էինք, որ Յեյուն այդ փուչիկներն ու ծողիկները ոչ թե վաճառում, այլ նվիրում էր երեխաներին: Երա «Ռեպի» հորինվող-կատարվող հնչյունների տակ արդեն դատարկվում էր մեծ տուրպակի պարունակությունը, երբ կողքի փողոցից մի տղամարդ, հիացունքից բերանը բաց մնալով ամբողջ միջոց արևանքեց Յեյոյին, քանի դեռ մեծ տուրպակում մի քանի փուչիկ էր մնացել ու մի քանի պարկ եզիպատագործին ծողիկ: Ուզում էր իր փողոցի երեխաներն էլ ուրախանային խուճուճ Յեյոյի գալուտով: Երեխաները կախվել էին Յեյոյի փեշերից, փորձում էին ձեռք բռնել, բաց չբռնել, ուզում էին, որ այսուհետև Յեյուն իրենցը լինի: Բայց կողքի փողոցի տղամարդը նրան նստեցրեց իր «Ջիլին»-ն տարավ: «Մյուս անգամ ե՛րբ ես գալու», փայտեց նրա ետևից կանցեցին բոլոր երեխաները: Երբ գլուխ դուրս հանեց մեքենայի պատուհանից ու խոստացավ. «Վաղը չեմ կարող, երեխե՛ք ջան, որովհետև վաղը Վերջին գամ-ի գիտն է: Բարաբար շատ գործ ունեմ: Իսկ վաղը չե՛ մյուս օրը անձայման կգամ»: Երեխաները համբերությամբ սպասեցին, որ հաջորդ օրը, այսինքն՝ Վերջին գամի օրը անցնի: Բոլորը հաջորդ է մյուս օրը խոսում էին Յեյոյի մասին: Անդրանիկն ասում էր. «Ես գիտեմ, որ խանութում եզիպատագործին ծողիկներն մի պարկը 50 դրամ արժի, քայք 100 տվեցին Յեյոյին, թեև ինքն մի քիչ վնաս կրեց»: «Ո՛վ չգիտեր, ծայրակցում էին մյուս երեխաները-բոլորը էլ գիտեցին»: Բայց հաջորդ միտը Յեյոյի անպայման գալն էր, որ նա խոստացավ: Այդ է հաջորդ օրը մեր փողոցի երեխաներից ոչ մեկը չէր ուզում իր համակարգին մտնեց, չէին ուզում հետևելու քայք ճայել, չէին ուզում անգամ Անդրանիկի չորս տեսագրած Յեյոյին, այլ կենդանի Յեյոյին էին ուզում նորից տեսնել: Փուչիկներից մի քանիցը դեռ պահպանվել էին որոշ տներում: Բոլոր երեխաների մտքում արդեն թե պող, Յեյուն էր: Երանքից շատերը խոստում վաճառում էին, թե երազում արդեն երկու օր է Յեյոյին ե՛ն տեսնում: Սի ուսանողուհի ասաց, որ այդ Յեյոյին ինքը համապարհուն քակում է տեսել՝ փուչիկներ,

եզիպատագործին ծողիկներ ու էլ ինչ-որ մանր-մունր խաղալիքներ վաճառելիս, երգելիս ու պարելիս: Յեյուն խոստացած օրը չենկավ, չիայտնվեց, քայք երեխաների խաղերի մեջ կարծես քափանցել էր նրա երգերի ու պարերի արագությունը, ավելի հաճույքով էին խաղում «յոթ քար», «քաղաքը քաղաքի ետևից», «գատկապարան», «կլասիկ»: Իսկ Յեյուն չէր եկել ոչ թե այս պատճառով, որ մոռացել էր խոստումը և կամ շատ զբաղված էր երեկ խոստացած օրը, կամ էլ որ առնաստիվ իր համար այնքան էլ մեծ բան չէր խոստանալ ու խոստումը չկատարել, այլ այն պատճառով, որ մոռացել էր մեր փողոցի տեղը: Նրա պատահական հանգրվաններից մեկն էր մեր փողոցը, և ինքն իր վերաբարկումով էր Յեյուն, որ գոնե մի նշան չարեց այս փողոցը գտնելու համար, նույնիսկ քաղաքում էր խառնել: Նույն օրվա ընթացքում նա երևանի ամենատարբեր քաղաքներում էր տալիս իր սեանսներն ու տեղափոխվում: Այդպես ավելի հեշտ էր առևտուրը կազմակերպել: Այսպես շատ լավ էր անաչ գնում գործը: Կարծես մի տեսակ սպասում էր իր անելիքը մի փողոցում և ուզում էր նոր տարածքներ նվաճել: Բայց հանգրվան չէր ու ոչ մի հոնար չէր գտնում, թե ոնց վերադառնա այն նույն փողոցը, այսինքն՝ մեր փողոցը, որտեղ խոստացել էր անպայման վերադառնալ վաղը չէ մյուս օրը՝ Վերջին գամից հաջորդած օրը: Նրա գործերը Վերջին գամի օրն էլ շատ հաջող գնացին, քայք մի քիչ կտրված էր ողևորությունը: Յեյուն սիրել էր մեր փողոցի երեխաներին, երեխաներն էլ իր պատճառով խոսվել էին իրենց համակարգիչներից, հետևապես սերիալներից, նրա պատճառով ամհամբեր՝ ինչ-որ մեկին պատահում հաճույք էին վայելել, ինչ-որ իրական մեկին կարողանում, բուրդով օտար մեկին կարողանում էին տարբերում էին հասկանալով: Սենք՝ մեծերովս, պատկերացնում ենք՝ եթե համկարծ Յեյուն էլ ինչ-որ հրաշքով ինչի մեր փողոցի տեղը, նորից գա, ի՛նչ վայելք կլինի երեխաների համար, մեզ՝ բուրդիս համար, իր համար: Ուսանող արդիին այսօր հանգրվանում էր իր վեց տարեկան երգարիկ Դավիթին. «Դենց որ համապարհուն քակում նորից երևա, ես նրան կրեմն մեր փողոցը»: Իսկ երբուդային տաքիտում, երբ մեր թաղն է վերադառնում կենտրոնից, կողքիս նստած մեր փողոցի Անդրանիկը, որ մեծ-

րի հետ խոսակցության բռնվելու ոչ մի փորձ չունի դեռ, կարտանի իրենց պարավանների մասին տված հարցիս պատասխանը միանգամայն բերեց Յեյոյի կողմը: «Անել է, որ Վերջին գամից հետո ամապաման կգա»: Այս բառերն անելիս նա ուղիղ աչքերիս մեջ էր նայում, որ այնտեղ մի նշան տեսնեիր՝ իր խոսքերը հաստատող կամ հերքող: Ես, իհարկե, միանգամայն համոզված շեշտով խոսեցի, նույնիսկ փողոցը կողքում լինելու մասին իմ կակածով չիայտնեցի տղային, որ չպակասի իմ համոզվածությունը նրա աչքում, թե Յեյուն, եթե ասել է «ամապաման», չի կարող չգալ... Վերջ... Յեյուն Վերջին գամից հետո չկարողացավ գտնել մեր փողոցը, չեկավ... Նրա մասին արդեն գիտեցին կիրակի օրը մեր փողոցի հյուր եկած բոլոր երեխաները, բոլորի մի աչքը փողոցի ծայրին էր, մի ականց՝ փողոցի սովորական արունկներից չնմանվող որևէ ձայն որսալով էր զբաղված... «Չեկավ մեր այդ ծաղրածուն, չեկավ մեր ասած այդ տղան, չեկավ մեր այդ խոստացողը»: «Ինչո՛ւ չեկավ», դեռ մինչև մութն ընկնելը բոլորիս մտքում էր այս հարցը: Թեև ամեն մեկս ունեցիք մեր ենթադրությունները, քայք անկախ մեզից ուզում էինք, որ մեկ ուրիշը ասի պատասխանը... Իսկ եթե զա՛... համկարծ մի հրաշքով հիշողության մեջ վերականգնվեցին դեպի մեր փողոց բերող ճանապարհները, ինչքան ավելի լավը կլինի Յեյոյի համար այս աշխարհը... Դեռ չէինք հասցրել մոռանալ Յեյոյին, երբ մի առավոտ գարթենցիք, տեսանք, որ մեր փողոցի սկզբում մի կողմի գազատար խողովակից մինչև մյուս կողմին, ձգվել, փողփողում է մի պատասխան, որի վրա մեծ-մեծ տառերով գրված է. «Ես բեզ սիրում եմ, դու սիրտ չունես»:

Մեր փողոցի արդիկները ամենապատիվից մինչև պատճառած օրիորդ Լուսինը, մտածեցին, որ այդ պատասաղ հենց իրեն է նվիրված: Բայց օրվա վերջում իմացանք, որ համապարհուն մեր ուսանողուհին էր պատասաղի հեղինակին ներշնչել այսպիսի արարք կատարել: Այդ տղան էր օրեր առաջ Յեյոյին համոզել, համապարհուն բակից բերել մեր փողոց, որ գարդեցի մեջ մինչև իր ընկերը պատասաղ էր կողմից ամրացրել գազատար խողովակին, իսկ արդևա ծննդյան օրվա նախաօրեին գիշերով մնացել էր միայն պատասաղ ոլորված տեղից ձգել մինչև մյուս կողմի խողովակը:

ԵՐԿՈՒ ՎԱՐՈՂԵՆԵՐ

Դիմոն Բուցատի

յալների հանդեպ: Ի՞նչ անհեթեթություն... Ես պատրաստ էի երդվելու, որ մայրիկիս ավելի շատ դուր կգար, եթե իրեն տանեին ծածուն հարյուր քսանի վրա, քանզի արագությունը, եթե ոչ ուրիշ քան, նրա համար պիտի այն պատարճը տեսնեիր, թե սա սովորական, ամապային ամհոգ ուղևորություններից էր Բելուդոյուն գտնվող մեր տունը հասնելու համար: Գոլիանյան հիասքանչ օր էր, ամառն առաջին հարթաբաշվը, շրջակա գյուղերը շատ գեղեցիկ էին, որ մայրս ոտի տակ էր տվելով գիտե, քանի հարյուր անգամ, իսկ հիմա այնա չէր կարող տես-

նել: Ու հսկա երևան արդեն շատ էր բարձրացել, և ավտոմատապարհի ծայրակետում կազմավորվում էին օդապատկերները, ինչի պատճառով հեծվում մեքենաները բաժուն էին օռն չեք կախված: Արագաչափը տատանվում էր յոթ քսանսանուհի-յոթանասանուհիների վրա, դիակաղը մեր առջև բաժուն էր անշարժ, իսկ կողքից ինչպես երևում էին ազատ ու երջանիկ ավազներ, տղամարդիկ ու կանայք, բոլորը կյանքով աղեցուն, երևա չքնաղ աղջիկներ երիտասարդների կողքին, բաց, նորաձև զգեստներով ու քածուց ծածանվող մազերով: Նաև բեռնատարներն էին մեզ վազանցում, կցասալակներովը

ևս, քանզի մեր դիակաղը գնում էր դանդաղ, ու ես մտածում էի, թե ինչ տխմարություն էր այդպես ընթանալը, մեծած մայրիկիս համար գեղեցիկ ու համեմի կլինեիր, եթե իրեն հեռավոր գերեզմանատուն տանեին մի հոյակապ, վառ կամրի պարոտային մեքենայով, արագության ուսմակը սեղմելով մինչև վերջ: Վերջ էլ վերջի, մի կնչանակեր իրական կյանքի մի փոքրիկ հավելված մասուցել նրան, մինչդեռ այդ դանդաղ ընթացքը սահմանի գծի երկայնքը, չափից դուրս էր մնալ հուրաբակություն: Ուստի, հարցնում էի ինքս ինձ, թե ինչի մասին էին խոսում դիակաղի երկու վարորդները.

Տարիների հեծվող դեռ ինքս ինձ հարցնում եմ, թե ինչ էին ասում իրար դիակաղի երկու վարորդները, մինչև մեռած մայրիկիս տանում էին հեռավոր գերեզմանատուն: Երկար պիտի գնայիրք, ավելի, քան երեք հարյուր կիլոմետր: ավտոմատապարհը բաժուն էլ չէր, ու շարաղեղ դիակաղեցն առաջանում էր դանդաղորեն: Մենք նրա զավակները, գնում էինք դրա հետևից մեքենայով, մոտ հարյուր մետր հեռավորություն պահած, և արագաչափը տատանվում էր վարսուհի-յոթանասանուհի վրա, այդ դիակաղեցր երևի արված էին հենց դանդաղ ընթանալու համար, քայք ես մտածում եմ, որ դրանք այդպես էր այն ընթանում, քանզի կարգն էր երբայիսին, ասես արագ ընթացքը անհարավալից լիներ հանգուց-













Ես այն նետն եմ, որ ծառայության էր անցնել քաղաքի անվտանգության գումարտակում: Ծառայության ընդունվել մի օր պալատի մոտ էի պարելություն անում, հաջորդ օրը փողոցներում տեղադրված աղբարկղերի:

Այն ժամանակվանից պարելություն սահմանվեց աղբարկղերի մոտ, երբ երկրի անհաջող կառավարման մասին մասնապահական գրություններ երևացին քիթերյա աղբամանների կողքերի վրա:

Պետք է տեսնե՞ք, թե քաղաքում վերաբերող ինչ ծաղրանկարներ ու տեսակ-տեսակ գրություններ էին աղբարկղերն թողնվել:

Աղբարկղերը խայտաբղետ գրություններից ու վկարձակի, գունավոր նկարներից արտասովոր զեղեղեղ տեսք էին ստացել: Քանի որ մարդիկ դարձրեցին

# ՆԵՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՆԸ ՀԱՏԱԿԵՐ ՆԱՐԱՅԻ ՄԱՍԻՆ

գրատախտակի, գրքերի ու թերթերի էջերին իրավունք չունեին քաղաքի մասին որևէ բան գրելու, նրանք իրենց սրտի ուզածն անզուսպ գրոտել էին աղբարկղերի վրա: Ոչ ոք մակերեսորեն չէր կարող մտադրել քաղաքի մասին մեղադրանքներ պարունակող տեղեկությունները:

Խորամուխ լինելով գրությունների հեղեղի մեջ՝ քաղաքում վերաբերող տողերը հեշտ էին զանազանվում շաղակրատանք ու հուժկու պարունակող տեքստերից: Գաղտնիքներ լավ էին ընթերցվում բանաստեղծական հորինվածքով քառատողերը:

Թողնված գրություններից մարդիկ իմանում էին, որ քաղաքի Շարան շատակեր է ու աչքամուկ, բացի ուտելիքի համից, չի զգում ոչինչ: Իրական աշխարհը շատակերի համար միայն թուրոլ ուտելիք է: Շատակեր Շարան բացահայտ արտոնվելով միանգամից ուտում է մի քանի եգ, կալ է տալիս հացով լի ամբարներ: Լույնիակ ճաճի գորտերը սակվել են, չեն կոկոսում, վախենում են արքան իրենց նույնպես խճի: Արդյունքը պարենամթերք ձեռք բերելու համար ամեն ամիս ավելացնում էր զանվիղ հարկերը:

Ավելիոր հարկերը մեզ սպանում են:

Թու՛ւ, արքայի ընչաքաղցույթունը դարձել է վատբարազույց չարիք, նրա աչքն ու որովայնը չեն կշտանում:

Շարան մոռացել է պետական գործերը, նա շարունակում է աշխարհի հետ կապը պահել ուտելիքի համով, բողբոջում էին մարդիկ:

Երկրում պակասել էին հացի պաշարները: Լույնիակ եկեղեցին օրացույցի մեջ պատի օրերի թիվն ավելացրել էր, որ ժողովուրդը հացի խնայողություն անի հանուն Շարայի:

Որկումով արքայի փորն ավելի թաշվ օրեցօր մեծանում էր: Այն այնքան փրուն դարձավ, որ մի օր, արդունի դռնից դուրս գալով, ձգվեց հեռու, այնքան հեռու, որ ծածկեց, տակով տվեց հազարավոր հեկտար բերրի հողատարածքներ, ամհամար գյուղեր, անդրդիտոր ձորեր ու սարալանջեր: Արքայի փորի տակ կանաչ խոտերը փռեցին, զորենի հասուն հասկերը, հատիկը քափելով, զետեմատարած պատեցին, ծաղկուն շեները իմենահատակ քարուքանդ եղան:

Մի քանի ճարպիկ գյուղապետեր, երբ տեսան Շարայի փռված փորի տակ անհետանում են գյուղեր ու ավաններ, վտանգ զգացին նաև իրենց շեների հան-

դեպ: Երանք, խելքերին զոտ տալով, հինավուրց քնակավայրերի անունները փոխեցին: Եվ ի պատիվ արքայի փորի՝ դարձրեցին Արքայափոր, Թագավորափոր, Շարայափոր, Արքունափոր, Ճարպափոր, Ճանաչափոր...  
Գյուղապետերը մտածում էին, որ Նոր նպատակով անվան համար արքան փորը հեռու կպահի իրենց շեներից: Բայց, արի ու տես, տարածությունն այդ քնակավայրերի ու շատակեր Շարայի փորի միջև ժամ առ ժամ նվազում էր:

Թե որտեղ էր վերջանում արքայի փորը, ոչ ոք ճշգրիտ չգիտեր: Այն, փքվածությունն անընդմեջ ավելացնելով, շարունակում էր տարածվել:  
Պալատական արվեստագետները գիտական մի քանի աշխատություններ գրեցին «Մեծ փորի առաջընթացը» խորագրով:

Թռչունները, երբ նստում էին մեծածավալ փորի եզրին ու դալայալում, արքան այդքան հեռավորությունից չէր լսում նրանց ճովոլոյունը:  
Քաղաքական գործիչները իրենց անհամ ճառերն արտասանելու համար, որպես բարձր հարթու օգտագործում էին արքայի փորը:

Ալպինիստներն իրենց լեռնազուհե մարզումներն անկախացնում էին փորի բարձունքին: Սողունները շատ ժամանակ, ջերմություն ընդունելու համար, նրա փորին էին պատկուսում: Մի անգամ երկրաբանների մի արշավախումբ արքայի փորը բլուրի տեղ ընդունեց: Ասեմ, նրանք ամենևին մեղք չունենին, իրենց մոտ եղած քարտեզով էին առաջընդունում, իսկ աշխարհագետներն արքայի փորը քարտեզագրել էին որպես բլուր:  
Նավթ գտնելու նպատակով երկրաբանները, առանց ժամանակ կորցնելու, մի քանի տեղ հորատանքներ բացեցին: Քանի որ փորը պալատից շատ էր հեռացել, յոթը սարից այն կողմ էր անցել, արքան տակավին չիմացավ, թե ինչպես հորատիչները սրակտուց անգղերի մասն որովայնի անցքեր բացեցին:  
Բուպներ անց հորատանքված աղիներից գազեր ու նավթանման հեղուկներ դուրս ժայքեցին: Շրջակայքում ծխացող ճափները գոյացան:  
Առասպելական մեծության փորը դանդաղորեն փչկեց ու շատ չանցան՝ արքան չուզեց փչեց: Արքայի որկրամոլությունից մնացին միայն զարշառտ ճափները:



ԳԵՎՈՐԳ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Այս տարի տպագրվեց 4-րդ գիրքը՝ «գեղարվեստ»-ը: Այն ներառում է նախկինում տպագրած 3 գիրքը և նոր բանաստեղծությունները: Մի փոքր հաստափոր է ստացվել, թմբուկ: Իսկ, ընդհանրապես, ես պզտիկ, լղարիկ ժողովածուների կողմնակիցն եմ, առաջնորդվելով ընթերցողին խնայելու և գիրքը մեկ չնչով ավարտելու սկզբունքով:  
Կարծում եմ, թե կենդանի, բարատող գիրք է ստացվել, համեմայնելիս, ընթերցողը շատ չի ծանձրանա:

**Ունայնիկներ**  
Եթե մեծավ մասամբ ես կարծեմ գրում ապա կարող եմ ինձ արտունել նաև երկար գրել  
\*\*\*

քանի որ գրականությանը չեմ վստահվում գրականությունն էլ ինձ և ինձպետներին հազվադեպ կվստահակի  
\*\*\*  
Եթե հայրենական արտադրության բանաստեղծություն գրողները ինձ պես են մտածում և զգում որ իրենց բացառիկ երևույթ են որ իրենց գիրը կհարատևի դարեր  
ապա ես կարող եմ արտունել ինձ այդպես չմտածել  
\*\*\*  
Եթե արդեն չափանիշ է որ իրավ բանաստեղծը պետք է հազար ու մի լեզվով քարզամակի և շարունակ մրցանակներ ստանա  
ապա ես կիսատ-պոստ բանաստեղծ եմ  
\*\*\*  
բանաստեղծական մտախղացումներս  
իրար իրմտուն ժամ առաջ ուզում եմ մարմին հագնել ես ինձ  
կարող եմ թույլ տալ ստեղծագործական արդյունավետ ծուլություն  
\*\*\*  
սեպտեմբերյան մի գիշեր հասկացա որ թեպետ ողջ բայց վարդուց մեռած եմ ահա  
մի քանի տարի էլ գարնանը սիրտս վարդի պես չի բացվում և մարմինս չի լսում մոտեցող աշնան ոտնածայները

հնարավոր է ես ամեն օր կամայ-կամայ ճախացել էի ինձ անաստված աստրայից հարազատ քաղաքում տանը  
աշխատատեղում բանված լինելու զգացողությունից բացառված չէ նաև որ աղբարկղում ղովարությանը մարվող վարկերը և չնչին պարտքերը ինձ մի քիչ սպանեցին զուգեմ  
ակահողը ծխախոտը քայքայող լյարդս և մազաթափվող ցայլքս դանդաղորեն սպանեցին ինձ ենթադրելի է որ հայրենիքիս արդեն ժամանակավոր իշխանությունը ինձ սպանեց նա մեղքներու հազար ու մի հնար գիտի որոշակիորեն հստակ չեմ կարող ասել թե ով կամ ինչը ինձ սպանեց  
\*\*\*  
հոկտեմբերի լուսարացներին կռահեցի որ մեջքի ցավը կարող է մուսա լինել  
բայց չիսակացա հոկտեմբերը մե որ է թե ընկույզ  
\*\*\*  
անձրևների կեղեցումից առաջ պայծառակերպությունը ճուրձների թիթեռ է որ գորովանքով հանդարտորեն իջել է ղեմքիս  
Բանաստեղծելու յոթ ոչ մահացու մեղքերը  
ինչ-որ տարիքից սկսած բնականաբար 20-ից հանձնարելությանը չիվկանդա-

նալ մահացու մեղք չէ բայց տկարություն է  
\*\*\*  
ինչ-որ տարիքից սկսած ասենք 30-ից սիրային բանաստեղծություն գրելը մահացու մեղք չէ բայց ամոր է  
\*\*\*  
ինչ-որ տարիքից հետո ենթադրենք 40-ից վատ գրելը մահացու մեղք չէ բայց անամախություն է  
\*\*\*  
ինչ-որ տարիքից անդին դիցուք 50-ից չլուրջ մահացու մեղք չէ բայց մեծամտություն է  
\*\*\*  
մինչև 70 տարեկանը դասականի դափնիով պծնված ուրիշներին վերևից նայելը մահացու մեղք չէ մանկամտություն է  
\*\*\*  
80 տարեկանից առաջ կամ հետո գրանությունը մահացու մեղք չէ բայց այլասերվածություն է  
\*\*\*

լավագույն տողերը ծիրանի և թթի մասին ես եմ գրել ըստ այդմ ամեն տարի պետք է ինձ անասանման քանակությանը ծիրան և թուր նվիրաբերեն  
զոհեն նրանցից ժայթքած օդիները  
\*\*\*  
հողերս բուժելու համար ոչ թե ես պետք է ծաղիկից ծաղիկ անցնելով հատ-հատ մեղուներ բռնեմ այլ նրանք ի վերջու պարտավոր են գլխի ընկնել և դասակ առ դասակ մեղմտորը իջնելով ձեռքերիս և ութերիս ազատագրվեն  
\*\*\*  
ծակ կոչիկներ  
\*\*\*  
համբերատար առանց բնկրկալու անցնել օգոստոսով երբ հետևում մնացին հուճիս և հուլիսը  
\*\*\*  
զորդի տարած մանր-մուրը քարեր ջրափոսեր  
\*\*\*  
ինչ-որ մի տեղ մի անկույունում անհարմար է չզգրակահարվել ինչպես Դրանտ Դինքը





ԱՇՈՏ ՄԵԼԻՔՅԱՆ

«Մայրամուտի կրակները» Աշոտ Մելիքյանի չորրորդ ժողովածուն է, որտեղ ներառված են գրողի վերջին շրջանի բանաստեղծությունները և պատմվածքները: Իրեն հատուկ զուլալությամբ, բժախնդրությամբ, հույզերի մաքրությամբ են այցի ընկնում հեղինակի գործերը: Ամեն մի պատմվածքը կենսագրական բացահայտում է, ամեն մի բանաստեղծությունը կարոտի, հույզի և հույսի մի պարունակ, որը ժայթ

քելով հասնում, մտնում է ընթերցողի հոգին:

Ավագների վրա զույն-զույն, Ավագների վրա թաց, Պատկերված են մի վաղ գարուն Ու մի շաղոտ լուսաբաց...

Մայրամուտի կրակներ՝ Դեքիաթային հրացուլք, Թողած անտոսաց պահեր՝ Խամրեք պիտի քիչ հետո:

Խամրեն պիտի, ախտ՝ ս, և Կախարդող ողջ զույներն այդ Դառնան գեղեցիկ հուշեր-Դուշերի մեջ անավարտ:



Մանուկների հետ հաղորդակցման փոքր է, քե մանուկների բարգձմանիչն ու դեսպանը լինելու բացառիկ առանձնաշնորհում մանկագիր լինելը: Սուբիաս Աղալարյանին հաջողվել է լինել ավելին. խաղարկուն ու զվարճալի բանաստեղծություններում հարց ու պատասխաններով՝ հօգուտ երեխաների, մանկագիրը հարցանակներ է գրանցում, որոնք վերջում մանկան վարակիչ ուրախությամբ հաշտություն են կնքում մեծ ու փոքր աշխարհների միջև:

Ահա աշակերտ-ուսուցիչ զրույցների մի քանի նմուշ, որ խնդրակների համար պատրաստի նյութեր են.

-Ինչքա՞ն կարտեն մկները, -Դա կախված է կատվից: \*\*\*

-Չկներն ինչո՞ւ չեն կարող խոսել, -Իսկ Դուք կկարողանայի՞ք ջրի տակ խոսել, ընկ, Անդրանիկ: \*\*\*

-Ինչո՞ւ է են ծնունդը ջրերը սառչում, -Որ վրան չնուշվող սահեն: \*\*\*

-Ուկն մանյակը թքվի մեջ կուծկի, -Եթե լուծվեր, Դուք այն չէիք մեծի թքվի մեջ: \*\*\*

-Ես բացաղորում եմ, իսկ ջր գլուխը ոչինչ չի մտնում, -Ուրեմն այնտեղ դատարկ տեղ չկա: \*\*\*

Մանկագիրը խաղում է երեխաների քիմում



արգասաբեր էր: Ավարտեցի Լեոնիդ Անդրեևի «Եղիագարը» և «Գուրա Իսկաբովագին» վիպակների բարգձմանությունը վերջնական տեսքի բերելու աշխատանքը, գրեցի պատմվածքների մի շարք, որը դեռ անտիպ է, աշխատում են «Բամիներ երկրի վրայով» ինքնակենսագրական վիպակի վրա: Ի դեպ, այս վիպակի անվան հետ է կապված «Անին ու քամին» վերջերս լույս տեսած մանկական գրքիս նախապատմությունը:

Ես ու հնգամյա թոռնուհին՝ Անին, հանգստանում էինք Օտալկանոցում, և ես աշխատում էի: Անին կողքիս նստած խաբզու էր, նկարում, հարցեր տալիս, իր համար հեքիաթներ հորինում: Ի վերջու հոգնեց և անցավ հարցապնդումներին, թե ինչ են ես այդքան շատ գրում: Երբ իմացավ, որ քամիների մասին է, իսկույն լեռն ու գործի անցավ: Գրեց, նկարեց և ի վերջու ինձ մեկնեց իր խաբզած թևերը, որի վրա քամի էր նկարել.

-Տատի ջան, ես էլ գողո եմ, տես, գրել են «Անին ու քամին» իմ գիրքը: Այդպես սկսվեց գրքի գաղափարը: Կատարեցի իմ հրաշք թոռնուհու պատվերը: Նա միշտ երեքաթեր է հորինում, ու ես գրի եմ առնում: Այս անգամ նրա մասին գիրքը որոշեցի գրել իր հետ: Այն նորածին մանկան մերաշխարհի բացահայտումն է մինչև մանկապարտեզ, այնուհետև շարունակվում է իմ դպրոցական տարիների ջերմիկ ու տաք պատմվածքներով: Մենք որոշեցինք միասին ներկայանալ երեխաներին՝ բացահայտելով օրորոցից մինչև մանկապարտեզ

և ապա դպրոց անցնելից ճանապարհը, աղջնակի ներաշխարհը, աշխարհաճանաչման աստիճանական հեքիաթային փուլերն անցնելով, ձևավորվում է երեխան, ապագա մարդը: Երբ դեռ օրորոցում մանուկը ընկալում է ծայրերը, զույները, առարկաները, դրսևորում իր վերաբերմունքը, մասնակից դառնում շրջապատի առօրյային, իր համար ձևակերպում լավ և վատ երևույթները, սիրելի, զարմանալի ու վախեցնող, հաճելի ու տհաճ իրերը, ամեն ինչ առարկայացնող, այդ բոլոր՝ Ուլուցիկ շոյանքն ու քամին, որոնք զարմացնում են փոքրիկ Անին: Փորձել են մանկան աչքերով բացահայտել իրականությունը, օրորոցից իջած, առաջին քայլերն անող աղջնակի զարմանքի ու հիացմունքի ճիշդվում մերձեցավ միջավայրին, ձևավորել նրա մեջ լավը, սիրելին, գեղեցիկը:

Թվում է, թե դրանք պարզունակ, անկարևոր երևույթներ են, բայց չէ՞ որ ամեն մի երեխա մի հարցադարձ է, և ես փորձել եմ պատասխան տալ որոշ հարցերի:

Գրքի երկրորդ մասում պատասխաններ են պատմվածքներ, և ես համատեղել եմ իմ ու փոքրիկ Անիի մանկության ներաշխարհները:

ԱՆԻՆ ԳՆՈՒՄ ԵՄ ԱՄԵԿՎՄԱՐՏԵԶ

Անին այսօրվանից մանկապարտեզ է գնալու: Դեռ վաղ առավորից տատիկի հետ ընտրում են հագուստները, մեկ հավանում են վարդագույն բամբուկով, ժամեն կազարդ փեշերով շրջագնացող:

իր զարդերով, մեկ մանուշակագույնը, մեկ էլ սպիտակ օծիթով ու քիկնոցով կապույտ շրջագնացող: Անին շատ ամենազիստ է, հագնում է ու հանում, պտույտում հայելու առաջ: Բա գլխարկները, էլ քիթեռնակած, էլ վարդագույն հովաքով, մի խոսքով, մի խառնաշփոթ է տիրում տատիկի ննջախնայություն:

-Տատիկ, ես անպայման շրջագնեսու պիտի հագնեմ, որ պարելու ժամանակ այ այսպես բռնեմ փեշերս ու պտույտեմ:

Անին ծեղծերով ձգում է շրջագնեսուի փեշերը այդ ու ձայն և վարդագույն հովի մեծ անպտույտ հայելու առաջ:

Ան խաղաղիկներին մի մեծ վարդակակաչ ժապավեն են կապել, իսկ կոշիկները՝ կարծիք ասպակներով, ատլասից փափուկ ու սիրուն:

-Իսկական հրեշտակ ես, իմ Անի,՝ հիանում են պապիկն ու տատիկը նայելով հայելու դիմաց թվազգող թոռնիկին:

-Դա, հրեշտակ եմ, պարող հրեշտակ եմ,՝ երգում է Անին և փոքրիկ պայուսակը ուսին զգաց կանգնում է դրան մոտ:

-Դե գնանք, ուշացանք,՝ իսկ պայուսակի մեջ լցրել են գունավոր մատիտներ, ալբոմ, գրքեր: Անին չի մոռացել նաև Չուչի տիկնիկին: Նրանք նախապես փոխել են հագուստները, գուգել-գարդարել: Չուչին ընկերակցում է Անին:

-Տանք մնա ի՞նչ պիտի ամի, ո՞ւմ հետ պիտի խաղա,՝ ասաց Անին ու որոշեց նրան տանել իր հետ:

Մտավորականների մեծ մասը կարևորում է մանկական գրականությունը, քանի որ մանկության շրջանը մարդու կյանքի ամենազայուն փուլն է: Գեց գրականության միջոցով են երեխաները մերժում կամ ընդունում բազմաթիվ գաղափարներ, հավատալիքներ, սովորույթներ:

Երևանի «Երկու» հրատարակչության հրատարակած «Չգիտեմ» մանկական բանաստեղծությունների ժողովածուն կհարստացնի մանուկների աշխարհաճանաչողական գիտելիքները: Սուբիաս Աղալարյանի բանաստեղծությունները հիանալի երկխոսություններ կլինեն մեծ ու մանուկ շփումների մեջ:

Լուսինե Աղաջանյան

«ԱՆԻՆ ՈՒ ԶԱՄԻՆ» ԳՐԻՆ ԱՆԱՄԴԱՏԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրողի համար ժամանակը արժեքավոր է իր ստեղծածով: Ինչպես ասում էր Դրաստ Մաթևոսյան գրող-արարողը, «ժամանակի և գաղափարների ձևավորողը գրողն է»: Գիրքակ, բարդաբան վայրիվերումների այս հեղինակուհի տարին, սխարանների ու անձնագրությունների այս տարին գրողի համար փնտրություն, տազանայների ու կայունացման տարի էր: Բայց որքան էլ «մեր հոգիների տարին» փորձությունների ու մտահոգությունների տարի լինի, մենք միշտ զորակից ենք գրականությանը, փրկարար այն օղակին, որ միշտ բունելի վերջում լույս է վառում: Ինձ համար այս տարին և

Հուլիսի 2016 թ. ընթերցողների տևական ընդմիջումից հետո վերադարձվել է «Գարուն» ամսագրի 2016թ. առաջին համարը (գլխավոր խմբագիր՝ Աշոտ Գաբրիելյան): Բոլորիս կողմից սիրված ամսագրին մաղթում ենք ամենափառ ընթացք:

Հրատարակված է 33 մշակույթի նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունը իրականացնող Հայաստանի Գրողների Միության Երևանի մարզային մասնամյուլ:	տրված է 21.03.2005թ. հետ. (0312) 5 65 97	Համակարգչային ձևավորումը «Էլեկտրոն» Տպագրված է «Գյումրի տպարան» APC տպագրատանը
Հասցեն Երևանի մարզ, Գյումրի, Գորկու 62	Համարի պատասխանատու Ռոզա Դովհանմիայան	Տպագրված է 2 տպագրական մասով
Վկայական N 01Բ 001543		